ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ՂԵԿԱՎԱՐ

ИНСПЕКЦИОННЫЙ ОРГАН
ОХРАНЫ ПРИРОДЫ И НЕДР
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
РУКОВОДИТЕЛЬ
ENVIRONMENTAL PROTECTION AND MINING
INSPECTION BODY
OF THE REPUBLIC OF ARMENIA
HEAD

№ 01/1933-20
«23» հունիսի 2020թ.

<<Հայկական բնապահպանական ճակատ>>
կամավորական քաղաքացիական նախաձեռնություն
ք□Երևան, Սպենդիարյան 5, բն□ 24

Հարգելի՛ նախաձեռնության անդամներ,

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցության ղեկավար Լիլիթ Մակունցի 2020 թվականի հունիսի 4-ի գրության, կապված Հայկական բնապահպանական ճակատ քաղաքացիական նախաձեռնության կողմից բարձրացրած Քաջարանի հանքավայրի շահագործման հետ կապված մի շարք խնդիրների, Ձեզ եմ ներկայացնում հետևյալ տեղեկատվությունը՝

Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կողմից 2018 և 2019 թվականներին իրականացվել են ստուգումներ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունում: Ստուգման արդյունքում 2019 թվականի փետրվարի 21-ին կազմվել է թիվ 53 ակտը, որի 4-րդ և 6-րդ կետերում՝ ցիտում եմ □ (4□ Համաձայն թիվ ՊՎ-232 ընդերքօգտագործման պայմանագրի 2.1 կետի ընկերությունը հանքավայրի հաշվեկշռային պաշարներից պետք է մարեր տարեկան 22,0 մլն. տոննա հանքաքար, սակայն 2017 թվականին հանքավայրի հաշվեկշռային պաշարներից փաստացի մարվել է 27,2 մլն. տոննա հանքաքար: Հանույթը կազմել է 26,77 մլն. տոննա հանքաքար, որից 7,12 մլն. տոննան պահեստավորվել է

Կորյունի փող. 15, 0009 Երևան, ՀՀ
15 Koryun Str., 0009 Yerevan, RA

Էլ.փոստ՝ gnel.hasratyan@ecoinspect.gov.am
Web page: www.ecoinspect.am

բացահանքի տարածքում, իսկ մնացած՝ 19,65 մլն. տոննա հանքաքարը վերամշակվել է հարստացուցիչ ֆաբրիկայում՝ 22,0 մլն. տոննայի փոխարեն:

Խախտվել է Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 4-րդ կետերի պահանջները: և 6□ Համաձայն 20 փետրվարի 2007 թվականի թիվ ԲՓ-17 շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության պահանջի ընկերության կողմից պետք է բացառվեր հանքավայրի գործունեության ընթացքում հանքաքարի արդյունահանման ծավալների՝ 12,5 մլն. տոննա, ավելացումը: Սակայն ընկերության կողմից փաստացի հանքավայրի հաշվեկշռային պաշարներից մարվել է 2015թ.՝ 17,9 մլն. տոննա, իսկ 2016թ.՝ 19,5 մլն. տոննա հանքաքար: Խախտվել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը: Սույն իրավախախտման համար պատասխանատվություն է նախատեսված Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 941-րդ հոդվածի 3-րդ մասով:):

Ինչ վերաբերվում է արձանագրված խախտմանը՝ պաշտոնատար անձանց նկատմամբ կայացվել է վարչական տուգանք նշանակելու որոշում և տուգանվել նվազագույն աշխատավարձի հարյուրհինսնապատիկի չափով: Ակտով 4-րդ կետով արձանագրված խախտման բովանդակությունում շարադրված է, որ արդյունահանված հանքաքարի մի մասը պահեստավորված է բացահանքի սահմաններում:

Հարգանքով՝

Տեսչական մարմնի ղեկավարի
պարտականությունները
ժամանակավորապես կատարող